

Հաշվետվություն

1. Աշոտ Մարտիրոսյան
2. ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի նախագահ
3. ք.Բազել, Շվեյցարիայի համադաշնություն, 13-17 հոկտեմբերի 2019թ.
4. Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն, Արևմտաեվրոպական երկրների կարգավորով մարմինների ասոցիացիա (ԱԵԵԿՄԱ)
5. Մասնակցել Արևմտաեվրոպական երկրների կարգավորով մարմինների ասոցիացիայի աշնանային հանդիպմանը:
6. Քննարկված հիմնական հարցերը.
 - ԱԵԵԿՄԱ -ի 2019-2023թ. Ռազմավարության առաջին ուղղության՝ անվտանգության ստանդարտների համալիր ներդրում, հարցով Ֆրանսիայի ներկայացուցիչը հայտնեց ԱԵԵԿՄԱ և Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն /ԱԷՄԳ/ ստանդարտների միջև եղած հակասությունների մասին: Ռեակտորային հարմոնիզացիայի աշխատանքային խմբին /RHWG/ առաջարկվեց որոշել վերանայման կրիտերիաները մինչև 2020 թվականի գարնանային հանդիպումը: Ավստրիայի ներկայացուցիչը առաջարկեց քննարկել՝ դրանք հակասություններ են թե տարբերություններ: Նախագահողը պարզաբանեց, որ ԱԵԵԿՄԱ-ի անվտանգության ստանդարտները և անվտանգության հսկիչ մակարդակները /SRL/ չպետք է հակասեն ԱԷՄԳ ստանդարտներին: Այս հարցը առավել կարևորվում է Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական Միություն համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի /CEPA/ պահանջների կատարման տեսակետից. Եվրոմիության անվտանգության դիրեկտիվների և ՀՀ միջուկային օրենսդրության մոտարկման ժամանակ հաշվի են առնվելու նաև ԱԵԵԿՄԱ-ի անվտանգության ստանդարտները և անվտանգության հսկիչ մակարդակները:
 - Նախատեսվեց վերանայել գործող ԱԷԿ-ների անվտանգության հսկիչ մակարդակները, հաշվի առնելով ժամանակակից պահանջները: Ժամկետ՝ 2025թ.
 - ԱԵԵԿՄԱ նոր ստրատեգիայի Ներդրման պլանի քննարկման արդյունքում որոշվեց այդ աշխատանքներում ներգրավել նաև Եվրոպայի տեխնիկական անվտանգության կազմակերպությունների ցանցին /ETSON/:

- Միջուկային անվտանգության /Nuclear Safety/ և միջուկային ապահովության /Nuclear Security/ ներդաշնակության/հարմոնիզացիա/ ապահովման համար որոշվեց մշակել նաև Ապահովության հասկիչ մակարդակներ /Security Reference Levels/.
 - Բավարարվեց ՌԴ-ի Ռոստեխնադզորի խնդրանքը՝ ԱԵԵԿՄԱ դիտորդ անդամից դառնալ ասոցիացված անդամ:
 - Ռեակտորային հարմոնիզացիայի և Ռադիոակտիվ թափոնների ու շահագործումից հանման աշխատանքային խմբերը ներկայացրեցին միջանկյալ զեկույցներ կատարված աշխատանքների վերաբերյալ:
 - Հանդիպման ավարտին ներկայացվեցին հանդիպման հիմնական եզրակացությունները:
7. Հանդիպել եմ Ճապոնիայի Միջուկային անվտանգությունը կարգավորող մարմնի Գլխավոր տնօրեն պրն. Շուիչի Կանեկոյի հետ, իր նախաձեռնությամբ: Քննարկել ենք ԱԵԿ-ների սեյսմիկ անվտանգության հարցերով հետագա համագործակցության հնարավորությունները:
- Հանդիպման նյութերը տեղադրված են Արևմտաեվրոպական երկրների կարգավորող մարմինների ասոցիացիայի պաշտոնական կայքում՝ <http://www.wenra.org/>

Աշոտ Մարտիրոսյան

21 հոկտեմբերի 2019թ.